ՀՀ Արմավիրի մարզի Դողս համայնքի ղեկավարի 2017 թվականի կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակից Վարդան Միրզախանյանի, համայնքի ավագանու 6 անդամների, բուժ ամբուլատորիայի, հայ փոստի աշխատակիցների ինչպես նաև համայնքի թվով 48 բնակիչների.

24.01.2018 թվական

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով <Տեղական ինքնակառավարման մասին>,<Իրավական ակտերի մասին>, ՀՀ օրենքներով, համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության հիմնարկի աշխատակիցների միջոցով իրականացնում է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2017թ . համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները: Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2017 թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել են որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:
Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև աշնանացան հացահատիկի բերքահավաքի կազմակերպմանը :
Գյուղը ունի իր առանձնահատկությունները:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Կան նա չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են `

1. Հողերի անեկամտաբերությունը
2. Հողասեփականատերերի բացակայությունը համայնքից
3. Տարիքային պատճառները
4. Գյուղտեխնիկայի անբավարարությունը
5. Ջրի սակագինը

ՈՒշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացած 42տ ազոտական պարատանյութը բաժանվել է բնակչությանը: Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության ոլորտում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի օբյեկտ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր: Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Մեծ ուշադրություն է դարձվում համայնքի սանիտարական վիճակին: Սիստեմատիկաբար՝ շաբաթը մեկ օր կատարվում է կենցաղային աղբի աղբահանություն, այդ նպատակով նախատեսված է համայնքի բյուջեից 1000.0 /մեկ միլիոն / հազ.դրամ :

ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ,ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել են տարբեր միջոցառումներ ՝ <Կանանց տոնի>, <Մայրության և գեղեցկության >, Անկախության տոների կապակցությամբ: Կատարվել է ամանորյա լուսավորության անցկացում ,Ուրախ միջոցառում երեխաների համար:

Կազմակերպվել են տարբեր միջոցառումներ՝ հանրապետության և մայիսյան հաղթանակների օրվան նվիրված, կազմակերպվել է ֆուտբոլի և վոլեյբոլի,շախմատի,նարդու խաղերի մրցույթներ: ՈՒշադրություն է դարձվում թոշակառուների և երիտասարդության հետ տարող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով: <Մշակույթի > տանը տեղավորված է նաև գրադարանը, որը ունի 6646 կտոր գրականություն,որտեղ անց են կացվում ցերեկույթներ ընթերցողների մասնակցությամբ ՝նվիված հայ հանճարեղ դասականներին, հայազգի մեծ գործիչներին: Համայնքապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:

Աջակցություն է ցուցաբերվում համայնքի սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը:Վերահսկվում է առողջապահական հիմնարկի աշխատանքները: Բուժ ամբուլատորիան կահավորված է առաջին անհրաժեշտության սարքավորումներով:

Համայնքում գործում է <Խնամակալության և հոգաբարձության> հանձնաժողով,որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան:

Տրվել է դրամական օգնություն նորածին ունեցող ընտանիքներին, համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, ՀՄՊ զոհված մասնակցի այրուն, արցախյան մարտերի և քառօրյա պատերազմի մասնակիցներին և ազատամարտիկներին,ինչպես նաև մարդկային կորուստ ունեցողներին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքում կատարվել է բոլոր փողոցների փոսալցումներ, խճապատում, կատարվել են նաև ասֆալտապատման աշխատանքներ:

Նորոգման աշխատանքներ են կատարվել ցերեկային լուսավորության բնագավառում հին հենասյունները և լամպերը փոխարինվել են նորերով,տեղադրվել են գերխնայող լամպեր:

Ոռոգման համակարգի ընթացիկ նորոգման համար գնվել և տեղադրվել են երկաթ բետոնե տարբեր չափերի 8 հատ կոնստրուկցիաներ , որոնք լուծել են Խաչատրյան փողոցի բնակչության գերխոնավ տնամերձ հողամասերի օգտագործելու, անհատական տների նկուղների ջրով չլցվելու հրատապ խնդիրները :

Ձեռք են բերվել շինանյութեր և եվրոպատուհաններ մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքների համար:

Գնվել են երաժշտական սարքեր և սարքավորումներ ,որոնք կօգտագործվեն համայնքում կազմակերպվող տարբեր բնույթի միջոցառումների ժամանակ:

<Մշակույթի> տանը գործում է ազգային պարի խմբակ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2017թվականի բյուջեով նախատեսված եկամուտները և ծախսերը

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազ. դր

	եկամուտներ	տ/նախ.	փաստացի	կատ% տարի
1	հողի հարկ	13015.5	20163.4	154.9
2	գույքահարկ	4200.0	3974.6	94.6
3	տեղ տուրք	120.0	91.4	76.2
4	վարձավճարներ և այլ ոչ հարկ.եկամուտներ	910.0	404.1	44.4
5	դոտացիա	20925.9	20925.9	100
6	հողի օտարում	414.0	414.0	100.0
7	տարեսկ.մնաց.	176.0	176.0	100.0
	ընդամենը	39761.4	46149.4	116.1

ԾԱԽՍԵՐ

հազ.դր

	ծախսեր	տ/նախ	փաստացի	կատ% տարի
	վարչական բյուջե	39171.4	38114.1	97.3
1	տեղական ինք/.վարչ/	20537.4	19798.8	96.4
2	համայնքային այլ ծառայություն	5500.0	5493.8	99.9
3	մշակույթ/վարչ/	4304.0	4287.9	99.6
4	սոց ծրագիր	6430.0	6134.0	95.4
5	սան մաքրում	1000.0	999.6	99.9
6	ճանապարհային տնտեսություն	1400.0	1400.0	100.0
	ֆոնդային բյուջե	590.0	588.0	99.9
7	սարքավոր.ձեռք բ.	590.0	588.0	99.9
8	ԸՆԴԱՄԵՆԸ	39761.4	38702.1	97.63

<Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն համայնքի բնակչությանը տրվել են 317 տեղեկանքներ և պատասխանվել է 78 դիմումի, 141 տարբեր բնույթի նամակների, անցկացվել է համայնքի ավագանու 7 նիստեր, որի ընթացքում կայացվել է 36 որոշումներ: 2017 թվականի համայնքապետարանի աշխատողների թվաքանակը կազմել է 9, որից 4-ը համայնքային ծառայողներ, իսկ <Մշակույթ> միացյալ տնօրինության աշխատողների թվաքանակը կազմել է 3 մարդ: 2017 թվականի համար աշխատավարձի վճարումը կատարվել է ժամանակին և աշխատավարձի պարտքեր չկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած համայնքի բյուջեով նախատեսված սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններով իրականացված են մի շարք միջոցառումներ, այնուամենայնիվ կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

3. Մանկապարտեզի շենքի կառուցում
4. <Մշակույթի> տան կապիտալ վերանորոգում

Դողս համայնքի ղեկավար Գ.Հարությունյան